ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԱԿ ՓԲԸ

ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծ 36ա.՝ (+374 10) 582 711, էլ. փոստ՝ policlinik17@mail.ru

№ 012/128 « 04» հունիս 2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ -ի /վերանվանվել է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ / (այսուհետ՝ Գնորդ) և «Ագաստ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.01.2024 թվականին կնքված N Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2 <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ -ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում որևէ մատակարարում 1,4,13.16.17.19.21.23.24.33 չափաբաժինների մասով չի կատարվել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը Պատվիրատուն միակողմանի լուծել է պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

Պայմանագրի միակողմանի լուծման ծանուցմամբ Վաճառողին առաջարկվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, որպեսզի գործող օրենսդրությամբ Պատվիրատուն չնախաձեռնի մասնակցին գնման գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց, սակայն Վաճառողի կողմից մինչ օրս վճարում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից, կայացնում եմ հետևյալ որոշումը՝

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգի , նախաձեռնել գործընթաց և մասնակցին ներառել գնման գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում :

Տնօրեն Ս" Բադալյան

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ագաստ» ՍՊԸ	00435781	ք.Երևան, Ավանեսովի 2		V		16.01.2024թ ԹՀ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2